Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/9» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.07.2022թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Գ. Վարդանյան – ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ,

Անդամներ

Ա. Մարտիրոսյան – ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Տ. Գալոյան - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ,

Վ. Բանդուրյան - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ավագ մասնագետ,

Ա. Հովսեփյան – ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Վ. Սիմոնյան - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության մասնագետ

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդ աշխատանքային օրը ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/9» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01254973, հասցե՝ ՀՀ, ք Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30, էլ հասցե՝ khv_84@mail.ru, հեռ.՝ +374 91404073
«ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ»	ՀՎՀՀ՝ 01037495, հասցե՝ ՀՀ, ք Երևան, Ավան 7փ 2նրբ 29/1 շենք, էլ հասցե՝ gigiconcern@gmail.com, հեռ.՝ +374 55755455

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին</u>**

Հաշվի առնելով, որ բացառությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մյուս մասնակիցների հայտերը մերժվում են՝ հանձնաժողովի կողմից գնահատվել է միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում առկա են որոշ անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հրավերով պահանջվել է առնվազն 2 x USB Type-A, սակայն մասնակցի կողմից առաջարկվել է 1 հատ USB 3.0, հրավերով պահանջվել է, որ ապրանքի էկրանը լինի IPS, սակայն առաջարկվող ապրանքի էկրանը IPS չի կամ բացակայում է նշում այդ մասին: Բացի այդ, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում չկա նշում առ այն, որ ապրանքը պետք է լինի չօգտագործված, ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը իրականացնում է մատակարարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. **<u>Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը</u>**

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/9» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացվում են հավելված 1-ում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. **<u>Հանձնաժողովի կայացրած որոշումները</u>**

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել Էյչ Գրուպ ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները,

2. «ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ»-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

6. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հուլիսի 15-ին ժամը 10:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Մարտիրոսյան

_____ Տ. Գալոյան

_____ Վ. Բանդուրյան

_____ Ա. Հովսեփյան

Գնումները համակարգող՝ _____ Վ. Սիմոնյան

Հավելված 1

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)					
		«Էյչ Գրուպ» ՍՊԸ					
		Արժեք		ԱԱՀ		Ընդհանուր գին	
		Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ
1	Դյուրակիր համակարգիչներ	582 500	582 500	116 500	116 500	699 000	699 000

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)					
		«ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ»					
		Արժեք		ԱԱՀ		Ընդհանուր գին	
		Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ
1	Դյուրակիր համակարգիչներ	1000000000	1000000000	-	-	1000000000	1000000000